ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱԶԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Գետազատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Գետազատ, (055)39-38-38 getazat.gugapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 30

ԳԵՏԱԶԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

1.ՀՀ օրենքով սահմանված Գետազատ համայնքի 2021թվականի <<Տեղական տուրքերի և վճարների>> դրույքաչափերը սահմանելու մասին:

2.Գետազատ համայնքի սեփականության գույքագրման արդյունքների հաստատումը ըստ գույքագրման հանձնաժողովի ներկայացրած ակտերի:

3.Գետազատ համայնքի 2020 թվականի բյուջեի հոդվածներում տեղափոխություն կատարելու մասին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆՏՈՆՅԱՆ ԱԼԻԿ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐԳՍՅԱՆ ՄՈՒՐԱԴ

Համայնքի ղեկավար՝ ԳԱՐԵԳԻՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱԶԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Գետազատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Գետազատ, (055)39-38-38 getazat.gugapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 31

ՀՀ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԳԵՏԱԶԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2021ԹՎԱԿԱՆԻ ,,ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ,,ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետ ության օրենքի 18-րդ հոդվածի 18, 19, 20 կետերի պահանջներով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Սահմանել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Գետազատ համայնքի 2021թ.-ի Տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը համաձայն հավելվածի.

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆՏՈՆՅԱՆ ԱԼԻԿ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐԳՍՅԱՆ ՄՈՒՐԱԴ

Համայնքի ղեկավար՝ ԳԱՐԵԳԻՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված

ԳԵՏԱԶԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2021Թ-Ի ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ

1.Գետազատ համայնքում 2021թվականի համար սահմանել տեղական տուրքերի հետևյալ տեսակները և դրույքաչափերը՝

1/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

հիմնական շենքերի և շինությունների համար՝

ա. մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ 15 000 դրամ,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 30 000 դրամ,
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50 000 դրամ,
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 50 000 դրամ,
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 100 000դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 3 000 դրամ,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 5 000 դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ 3 000 դրամ,

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝5 000 դրամ.

4) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4 000 դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 12 000 դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 15 000 դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 22 000 դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 26 000դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 50 000 դրամ.

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 4 000 դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 11 000 դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 15 000 դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 22 000դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 30 000 դրամ.
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քառասունհինգ 50 000 դրամ.

5/Համայնքի տարածքում՝

ա/) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ 350 դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

բ/ համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 200 000 դրամ.

գ/ համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 60 000 դրամ.

6/համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4 000 դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 7 000 դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 11 000 դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 16 000 դրամ,
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 21 000 դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 31 000 դրամ.

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 1 000 դրամ,
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 2 0000 դրամ,
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4 000 դրամ,
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 4 000 դրամ,

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 10 000 մեկ դրամ,
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ 16 000 դրամ.

7/համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 50 000 դրամ

8/ համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. Առևտրի օբյեկտների համար՝	25 000 դրամ
բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝	50 000 դրամ
գ. բաղնիքներին (սաունաներին) համար՝	200 00 դրամ
դ.խաղատների կազմակերպման համար՝	500 000 դրամ
ե.շահումով խաղերի համար՝	250 000 դրամ
զ.վիճակախաղերի համար՝	120 000 դրամ

9/ ավագանու կողմից սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ Երևան քաղաքի միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2 000 դրամ,

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3 500 դրամ,

գ. այլ արտաքին գովազդի համար՝ 1 500 դրամ, սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ

9.1 դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

9.2. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

10/ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Գետազատ համայնքի խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 100 000 դրամ.

11/) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ 10 000 դրամ.

2. Գետազատ համայնքում 2021 թ. Համար սահմանել տեղական վճարների հետևյալ տեսակները և դրույքաչափերը՝

1/ համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 10 000 դրամ

2/ ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 10 000 դրամ

3/ ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 10 000 դրամ

4/ համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1 000 դրամ

5/ համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 1 000 դրամ

6/ համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ փոխհատուցման վճար սահմանել՝ 1 000 դրամ:

3.Աղբահանության վճարների դրույքաչափերի սահմանում

Գետազատ համայնքապետարանի կողմից աղբահանությունը կազմակերպելու համար համայնքում բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական աղբահանության վճար սահմանել 100 դրամ:

1/ առևտրի /այդ թվում շուկաների/ , հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայությունների իրականացվող շինությունների մասով՝ 1քմ -20 դրամ /հաշվարկվել է , որ միջինացված յուրաքանչյուր 30.72 քմ-ից ամսական արտադրվում է 1 խմ աղբ կամ 1քմ -20 դրամ/

2/հյուրանոցների հ հյուրանոցների ծառայություններ իրականացնող այլ հասարակական շինությունների մասով՝ 1քմ-30 դրամ //հաշվարկվել է , որ միջինացված յուրաքանչյուր 83.3 քմ-ից ամսական արտադրվում է 1 խմ աղբ կամ 1քմ -30 դրամ /

3/արտադրական արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինությունների մասով 1քմ-8 դրամ //հաշվարկվել է , որ միջինացված յուրաքանչյուր 312.5 քմ-ից ամսական արտադրվում է 1 խմ աղբ կամ 1քմ -8 դրամ /

4/կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական և նմանատիպ այլհասարակական շինությունների մասով՝ 1քմ- 4 դրամ //հաշվարկվել է , որ միջինացված յուրաքանչյուր 625.0 քմ-ից ամսական արտադրվում է 1 խմ աղբ կամ 1քմ – 4 դրամ

4. <<Գետազատ մանկապարտեզ>> ՀՈԱԿ – ի կողմից մատուցված ծառայությունների դիմաց ծնողական վճարների դրույքաչափը սահմանել՝

1/յուրաքանչյուր երեխայի համար՝ 5 000 դրամ
2/նույն ընտանիքից 2 երեխա հաճախելու դեպքում գանձել միայն 1 երեխայի համար:

5. Սահմանել համայնքային անասնաբուժի կողմից մատուցվող վճարովի անասնաբուժական ծառայությունից օգտվելու համար հետևյալ վճարները՝

1/կենդանիների հիվանդությունների բուժման կանխարգելման հարցերով խորհրդատվություն՝ 500 դրամ
2/Ծննդօգնություն՝
2.1/ թեթև միջամտություն՝ 1 000 դրամ
2.2/ ծանր միջամտություն՝ 5 000 դրամ
3/Արյուն առում կամ այլ նմուշ առում՝
3.1/մանր կենդանի՝ 100 դրամ
3.2/ խոշոր կենդանի՝ 200 դրամ
Բացառությամբ ,,Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում,, պետական ծրագրում ընդգրկված հակաանասնահամաճարակային միջոցառումների:
4/կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքար՝ 200 դրամ
5/ախտահանություն՝ 1քմ 200 դրամ
6/միջատազերծում /դեզինֆեկցիա/՝ 1քմ 100 դրամ
7/կրծողների ոչնչացում /դերատիզացիա/ 1քմ 200 դրամ
8/արհեստական սերմնավորում՝ 5 000 դրամ
9/կենդանու հերձում՝
9.1/ մանր կենդանի՝ 1 000 դրամ

9.2/ խոշոր կենդանի՝ 3 000 դրամ

10/կենդանու բուժում կախված հիվանդությունների տեսակից և կենդանու տեսակից՝ յուրաքանչյուր այցելությունը՝

10.1/ մանր կենդանի՝ 1 000 դրամ

10.2/ խոշոր կենդանի՝ 2 000 դրամ

11/կենդանիների նախասպանդային զննում՝ կախված կենդանու տեսակից՝

11.1/ մանր կենդանի՝ 1 000 դրամ

11.2/ խոշոր կենդանի՝ 2 000 դրամ

12/կենդանիների հետսպանդային զննում

12.1/ մանր կենդանի՝ 1 000 դրամ

12.2/ խոշոր կենդանի՝ 2 000 դրամ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱԶԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Գետազատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Գետազատ, (055)39-38-38 getazat.gugapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 32

ԳԵՏԱԶԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԸՍՏ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԱԿՏԵՐԻ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 32 կետով.

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել Գետազատ համայնքի գույքը ըստ գույքագրման հանձնաժողովի ներկայացրած ակտերի, կից հավելված:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆՏՈՆՅԱՆ ԱԼԻԿ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐԳՍՅԱՆ ՄՈՒՐԱԴ

Համայնքի ղեկավար՝ ԳԱՐԵԳԻՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՏԱՐԵՎԵՐՋՅԱՆ ԳՈՒՅՔԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ

02/12/2020թ.

Համաձայն համայնքի ղեկավարի 2020թ. Նոյեմբերի 30-ի N17 կարգադրության հանձնաժողովը հետևյալ կազմով նախագահ՝ Ս. Հովսեյանը, Ն.Խաչատրյանը, ավագանու անդամ Դ.Մանուկյանը, առաջատար մասնագետ Մ.Ավագյանը և գրադարանավար՝ Զ. Մարգարյանը անցկացրած գույքագրման արդյունքում արձանագրեց , որ առկա են հետևյալ հիմնական միջոցները /արտադրման տարեթիվը, քանակը, սկզբնական արժեքը/

	ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԹԹ	ՔԱՆԱԿԸ	ԳԻՆԸ
1	Չիրկիզվող պահարան	1976	1	8586
2	Տակդիր SAHVO	2005	1	45 000
3	Բազկաթոռ	2012	1	75 000
4	Համակարգիչ ԻՆՏԵԼ A4	2012	1	497 000
5	Համակարգիչ Fujitsu	2014	1	390 000
6	Էլ.Ջեռոց Evrotherm	2013	1	30 000
7	Կախիչ	2012	1	35 000
8	Խորհրդասեղան	2012	1	55 000
9	Սեղան	2012	1	85 000
10	Աթոռ փայտ	2017	6	120 000
11	Խորհ. սեղան	2017	1	110 000
12	Գրապահարան	2017	1	90 000
13	նստարան	2017	3	210 000
14	Կասսա երկաթյա	1954	3	21 056
15	Գրապահարան	1954	2	16 064
16	Պատճենման ապարատ	2004	1	300 000
17	Մոնիտոր Սամսունգ	2005	1	85 001
18	Կասսա երկաթյա	1976	1	8 032
19	Համակարգիչ 2930 H2	2010	1	203 000
20	Պատճենման սարք MG 4018	2010	1	125 000
21	Մոնիտոր 1954 SE	2010	1	72 000
22	Համակարգիչ	2004	1	210 000
23	Սեղան 1 տումբ	2012	2	100 000
24	պահարան	2012	2	150 000
25	կախիչ	2012	1	35 000
26	Նոթբուկ	2016	1	300 000
27	նստարան	2016	4	260 000
28	Սեղան	2016	1	110 000
29	համակարգիչ	2018	1	315 000
30	Օդափոխիչ	2018	2	44 000

31	Սառնարան	2018	1	165 000
32	փոշեկուլ	2018	1	55 000
33	պրոցեսոր	2019	1	189 000
34	Բազկաթոռ	2019	1	150 000
35	Դինամիկ GEEAS 8518	2019	1	220 000
36	բազկաթոռ	2020	1	60 000
37	Աթոռ	2020	6	90 000
38	Բազ. տպիչ	2020	1	114 000
39	պրոցեսոր	2020	1	185 000
40	Բազմ. տպիչ	2020	1	115 000
41	շերտավարագույր	2018	25 քմ	150 000
42	Գազաֆիկացում	2016	147 քմ	900 000
43	Գյուղ. Շենքի ջեռուցում	2013	1	2 450 000
44	Հաս. զուգարան	2013	1	990 000
45	Ավտոմեքենա SHEVROLET	2012	1	5 600 000
46	Կանգառ	2016	1	450 000
47	Կանգառ 4 աղբաման	2016	1	450 000
48	Ջրագիծ 720 քմ	2005	720 քմ	3 242 900
49	Գազաֆիկացում 257 /3/ գ.մ	2005	257 /3/ գմ	9 530 719
50	Փողոցների Գիշ.լուս. ցանցի կառ.	2019.30.08		960 000
51	Կանգառի սպասասրահ	2019	1	370 000
52	աղբաման	2019	4	120 000
53	Ճանապարհային նշաններ	2019	5	100 000
54	Գետազատ անվ. Ցուցանակ	2020	1	200 000
55	Փողոցների գիշ. Լուս. Ցանց.	2020		900 000
56	Գրասենյակային շենք	1952	1	9 156 154
57	Բուժարանի շենք	1952	1	5 853 741
58	Ատամնաբուժարան	1952	1	69 832
59	Դեղատուն	1952	1	95 225
60	Ակումբ	1937	1	2 850 997
61	Մանկապարտեզ	1962	1	10 892 295
62	Բաղնիք	1963	1	3 501 417
63	Երկաթե գրադարակ	1960	30	26 565
64	գրականություն		4621	469 963

Հանձնաժողովի նախագահ՝ Ս.Հովսեփյան

Անդամներ՝ Ն.Խաչատրյան

Ավագանու անդամ՝ Դ.Մանուկյան

Գրադարանավար՝ Զ.Մարգարյան

Առ. Մասնագետ՝ Մ.Ավագյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱԶԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Գետազատ համայնք
ՀՀ, Արարատի մարզ, գ.Գետազատ, (055)39-38-38 getazat.gugapetaran@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2020թվականի N 33

ԳԵՏԱԶԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀՈԴՎԱԾՆԵՐՈՒՄ ՏԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 5 –րդ ենթակետով

ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ

1. 37-09-00 /ՀՀ պետական բյուջեից տրամադրվող այլ/ վարչական բյուջեի եկամտային մասում ավելացնել 2 630 600 ՀՀ դրամ:

2. Վարչական բյուջեի ծախսային մասից պակասեցնել՝

08-05-01-53 /հանգիստ մշակույթ կրոն/ գործառնական ծրագրի 4251 հոդվածից պակասեցնել 500 000 ՀՀ դրամ

09-01-01-51-Նախադպրոցական ուսուցում գործառնական ծրագրի 4239 հոդվածից 764 870 ՀՀ դրամ:

3. Վարչական բյուջեի ծախսային մասում ավելացնել՝

10-07-01-54 /սոց անապահով անձանց աջ/ գործառնական ծրագրի 4729 հոդվածին 500 000 ՀՀ դրամ

08-02-01-51-Գրադարանային ծառայություններ գործառնական ծրագրի 4111 հոդվածին 116 000 ՀՀ դրամ

04-02-01-55-Գյուղատնտեսական կենդանիների պատվաստ գործառնական ծրագրի 4241 հոդվածին 50 000 ՀՀ դրամ

4. Վարչական բյուջեից 3 229 470 հազար ՀՀ դրամ հատկացնել ֆոնդային բյուջեի եկամտային մաս և համապատասխանաբար նախատեսել ծախս 04-02-04-51 / Ոռոգման ցանցի կառ և վերակ/ գործառնական ծրագրի

5112 հոդվածին 2 866 470

5134 հոդվածին 363 000:

5. Ֆոնդային բյուջեի 38-01-00 / Կապիտալ ծախս/ գործառնական ծրագրի եկամտային մասում ավելացնել

17 253 500 հազար ՀՀ դրամ և համապատասխանաբար նախատեսել ծախս

04-02-04-51-/ՍուբվենՈռոգ ցանցի կառուցև վերա / գործառնական ծրագրի 5112 հոդվածին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՆՏՈՆՅԱՆ ԱԼԻԿ

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱՀԱՊԵՏ

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐԳՍՅԱՆ ԴԱՎԻԹ

ՍԱՐԳՍՅԱՆ ՄՈՒՐԱԴ

Համայնքի ղեկավար՝ ԳԱՐԵԳԻՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ